ՍՐԲՈՑ ՏՈՆԵՐ

Հայ Առաքելական եկեղեցին Բուն Բարեկենդան տոնից սկսյալ մինչեւ հոգեգալուստից հետո եւս մեկ շաբաթ, 104 օրեր սուրբերի տոներ չի նշում: Առաջին Սրբոց տոնը սկսվում է Սրբուհի Հռիփսիմեի եւ Սրբուհի Գայանեի տոներով:

Եկեղեցական տոներ, աստվածապաշտության կամ ծեսի և պաշտամունքի բաղկացուցիչ հիմնական բաժիններից է: Կատարվում են եկեղեցական հանդիսավոր արարողություններով, նվիրված են որոշակի դեպքերի ու անձերի ոգեկոչումներին կամ ուղղակի միջոց են հոգևոր խորհրդածությունների: Նպատակն է նվիրվել օրվա խորհրդին, Աստծո փառաբանությանը և կրոնական պաշտամունքին, ապրել հոգևոր բարեպաշտական կյանքով և խորհել հոգևոր արժեքների մասին: Քրիստոնեական, այդ թվում եւ Հայ եկեղեցու տոները նվիրված են Հիսուս Քրիստոսին, Աստվածածնին, խաչին, սուրբերին և մարտիրոսներին, ինչպես նաև ազգ-եկեղեցական նշանակություն ունեցող իրադարձություններին (Հայ Եկեղեցու համար այդպիսիք են Թարգմանչաց, Վարդանանց տոները): Մի շարք քրիստոնեական տոների հետ միախառնվել են նաև հեթանոսական շրջանի տոների որոշ տարրեր և ժողովրդական սովորույթներ : Կիրակին Տերունական օր է, նվիրված է Հիսուս Քրիստոսի Հարությանը եւ միշտ նշվում է որպես եկեղեցական տոն: Շաբաթվա մնացած օրերը սրբոց եւ պահոց օրեր են:

Կան շարժական եւ անշարժ տոներ:
Անշարժ են այն տոները, որոնք հաստատուն կերպով կապված են ամսաթվերին եւ ոչ թե շաբաթվա օրերին: Դրանք են հունվարի 5-ից մինչեւ 13-ը ներառող իննյակ օրերի տոները.

1. Ճրագալույց Սուրբ Ծննդյան (հունվարի 5)
2. Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն (հունվարի 6)
3. Սուրբ Ծննդյան յոթնյակը կամ ութօրեքը (հունվարի 7-12)
4. Անվանակոչություն (հունվարի 13)
5. Տյառնընդառաջ (փետրվարի 14)
6. Ավետում (ապրիլի 7)
7. Ծնունդ Աստվածածնի (սեպտեմբերի 8)
8. Ընծայումն Աստվածածնի (նոյեմբերի 21)
9. Հղություն Աստվածածնի (դեկտեմբերի 9):

Հաստատուն օրեր ունեն Աստվածածնի Վերափոխման (օգոստոս 15) եւ Խաչվերաց (սեպտեմբեր 14) տոները, բայց Հայ եկեղեցին դրանք նշում է այդ օրերին ամենամոտ կիրակի օրը: Շաբաթվա մեջ միայն երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին կարող են սուրբերի հիշատակները նշվել:

ՇԱՐԺԱԿԱՆ ՏՈՆԵՐ

Շարժական տոները կապված են Սուրբ Զատիկ (Հարության) տոնի հետ համաձայն Լուսնի լրումի:

ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԵՒ ԳԱՅԱՆՅԱՆՑ ՏՈՆ

Հռոմում Դիոկղետիանոս կայսեր օրոք ապրում էր ճգնակյաց քրիստոնյա կույսերի մի խումբ, որոնց գլխավորն էր Գայանեն: Հեթանոս կայսրը, իմանալով կույսերից մեկի՝ Հռիփսիմեի անզուգական գեղեցկության մասին, վճռել էր ամուսնանալ նրա հետ: Լսելով այդ՝ կույսերը որոշեցին գաղտնի փախչել Հռոմից: Կույսերի խումբը հեռացավ արևելք և ի վերջո ապաստանեց Հայաստանի Վաղարշապատ քաղաքի մի հնձանում: Այս մասին տեղեկանալով՝ Դիոկղետիանոսը հրովարտակ ուղարկեց հայոց Տրդատ թագավորին գտնել և ետ ուղարկել Հռիփսիմեին, իսկ եթե նրա տեսքը իրեն հաճելի լինի՝ պահել իր մոտ: Տրդատը նույնպես գերվեց Հռիփսիմեի գեղեցկությամբ ու ցանկացավ բռնությամբ իր կինը դարձնել նրան: Սակայն քրիստոնյա կույսը հավատարիմ մնաց իր ուխտին, Աստծո զորությամբ մինչև վերջ դիմադրեց հսկայական ուժի տեր արքային և փախավ արքունիքից: Այդժամ Տրդատի դահիճները հետապնդելով գազանաբար խոշտանգեցին Հռիփսիմեին և ապա՝ նրա նահատակության վայր ժամանած և նրա մարմինը թաղել խնդրող 32 կույսերին, ինչպես նաև՝ հնձանում մնացած Մարիանե կույսին: Այնուհետև թագավորի հրամանով դաժանաբար սպանվեց Գայանեն իր երկու ընկերուհիների հետ: Կույսերի նահատակությունից հետո ս. Գրիգոր Լուսավորիչը հողին հանձնեց 9 օր անթաղ մնացած նրանց սուրբ նշխարները, որոնք անուշահոտություն էին բուրում, և նրանց նահատակության վայրերում կառուցեց վկայարաններ: Ս. Հռիփսիմեի և 32 կույսերի վկայարանի տեղում հետագայում կառուցվել է Ս. Հռիփսիմե եկեղեցին, Ս. Մարիանեի վկայարանի տեղում՝ Ս. Շողակաթը, իսկ Ս. Գայանեի և 2 կույսերի վկայարանի տեղում՝ Ս. Գայանե եկեղեցին: Հռիփսիմյան կույսերի նահատակության հիշատակին է նվիրված Կոմիտաս I կաթողիկոսի (615-628) կողմից ստեղծված «Անձինք նուիրեալք» հանրահայտ շարականը:

www.stjoharmenianchurch.org